ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարբի համայնք, 3-րդ փողոց, N 1, էլ. փոստ karbi_karbi@mail.ru
Հեռ. +37423290590

ՈՐՈՇՈՒՄ

«05» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ N 29

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԱԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ կետով, Կարբի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Կարբի համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 9 նիստի հետևյալ օրակարգը՝

1. 0.079հա և 0.1004հա /կադաստրային ծածկագրեր՝ 02-058-0314-0011 և 02-058-0348-0020/ հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխելու մասին հարցը,

2. Ուշիի բնակավայրում <Կարբիի առողջության առաջնային պահպանման կենտրոն> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից բուժակ-մանկաբարձական կետ ստեղծելու մասին հարցը:

/Զեկ.՝ Կ. Բաղդասարյան/

Կողմ 6 բացակա 3 դեմ 0 ձեռնպահ 0

1	Ալեքսանյան	Հայկ	բացակա
2	Ամիրյան	Կարապետ	կողմ
3	Ավետիսյան	Լիանա	բացակա
4	Ասլանյան	Մեյրան	բացակա
5	Բաղդասարյան	Տիգրան	կողմ
6	Նանյան	Թաթուլ	կողմ
7	Հայրապետյան	Հրահատ	կողմ
8	Մայիլյան	Զոհրաբ	կողմ
9	Նազարեթյան	Վարդգես	կողմ

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարբի համայնք, 3-րդ փողոց, N 1, էլ. փոստ karbi karbi@mail.ru
Հեռ. +37423290590

ՈՐՈՇՈՒՄ

«05» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ N 30

0.079ՀԱ ԵՎ 0.1004ՀԱ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐ՝ 02-058-0314-0011 ԵՎ 02-058-0348-0020/ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ՏԿԶ նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի 04.10.2017թ.-ի թիվ 03/16.1/6357-17 գրությունը, ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2017 թվական հոկտեմբերի 4-ի թիվ 109 դրական եզրակացությունը, Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին 11-րդ կետի ե) ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, Կարբի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Կարբի համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, Նաիրի Արտաշեսի Սահակյանի սեփականություն հանդիսացող 0.079հա և 0.1004հա /կադաստրային ծածկագրեր՝ 02-058-0314-0011 և 02-058-0348-0020/ գյուղատնտեսական նշանակության այլ հողամասերը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ ինքնակամ կառուցված հասարակական նշանակության սննդի օբյեկտը օրինականացնելու և պետական գրանցման ներկայացնելու նպատակով:
2. Նաիրի Արտաշեսի Սահակյանից 02-058-0314-0011 կադաստրային ծածկագիրը կրող 0.079հա հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար գանձել 3.568.628 (երեք միլիոն հինգ հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր քսանութ) դրամ, (790քմx4517.25=3.568.628դրամ, կադաստրային արժեքի տարբերություն՝ 4524-6.75=4517.25):
3. Նաիրի Արտաշեսի Սահակյանից 02-058-348-0020 կադաստրային ծածկագիրը կրող 0.1004հա հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար գանձել 4.535.319 (չորս միլիոն հինգ հարյուր երեսունհինգ հազար երեք հարյուր տասնինը) դրամ, (1004քմx4517.25=4.535.319 դրամ, կադաստրային արժեքի տարբերություն՝ 4524-6.75=4517.25):
4. Ինքնակամ կառուցված շինությունների համար՝ /02-058-0348-0020 կադաստրային ծածկագրում առկա է 701.51քմ ինքնակամ կառուցված հասարակական նշանակության սննդի օբյեկտ/,

Նաիրի Արտաշեսի Սահակյանից գանձել՝ 3.647.852 /երեք միլիոն վեց հարյուր քառասունյոթ հազար ութ հարյուր հիսուներկու/ դրամ, 701.51x5200=3.647.852 դրամ:

4. Սույն որոշման 2, 3 կետերը և Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին 11-րդ կետի ե) ենթակետը ընդունել ի գիտություն:

5. Հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխելու համար ընդհանուր՝ 8.103.947 (ութ միլիոն մեկ հարյուր երեք հազար ինը հարյուր քառասունյոթ) դրամ գումարը մուտքագրել Կարբիի համայնքապետարանի 900445124143 հաշվեհամարին, կամ Կարբիի համայնքապետարանի դրամարկղ, Ինքնակամ կառույցների օրինականացման համար 3.568.628 (երեք միլիոն հինգ հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր քսանութ) գումարը մուտքագրել Կարբիի համայնքապետարանի 900445002513 հաշվեհամարին, կամ Կարբիի համայնքապետարանի դրամարկղ:

6. Սույն որոշման 2 և 3 կետերով նշված գումարները որոշման ընդունման օրվանից ենթակա է վճարման 60-օրյա ժամկետում, չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

7. Հանձնարարել Կարբի համայնքի ղեկավարին հողային հաշվեկշռում կատարել նշված փոփոխությունը:

Կողմ 6 բացակա 3 դեմ 0 ձեռնպահ 0

1	Ալեքսանյան	Հայկ	բացակա
2	Ամիրյան	Կարապետ	կողմ
3	Ավետիսյան	Լիանա	բացակա
4	Ասլանյան	Մեյրան	բացակա
5	Բաղդասարյան	Տիգրան	կողմ
6	Նանյան	Թաթուլ	կողմ
7	Հայրապետյան	Հրահատ	կողմ
8	Մայիլյան	Զոհրաբ	կողմ
9	Նազարեթյան	Վարդգես	կողմ

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարբի համայնք, 3-րդ փողոց, N 1, էլ. փոստ karbi_karbi@mail.ru
Հեռ. +37423290590

ՈՐՈՇՈՒՄ
«05» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ N 31

ՈՒՇԻԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ <ԿԱՐԲԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ> ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲՈՒԺԱԿ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԿԵՏ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, 1-ին կետի 15-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 958-Ն որոշման՝ ՀՀ Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին <<6>>-րդ կետով, Կարբի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Ստեղծել Ուշիի բնակավայրում <Կարբիի առողջության առաջնային պահպանման կենտրոն> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից բուժակ-մանկաբարձական կետ:

2. Բուժակ-մանկաբարձական կետի գործունեությունը իրականացնել նախկին՝ <Ուշիի առողջության առաջնային պահպանման կենտրոն> համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության վայրում՝ Ուշի համայնքի 4-րդ փողոց, թիվ 3/1 հասցեում:

Կողմ 6 բացակա 3 դեմ 0 ձեռնպահ 0

1	Ալեքսանյան	Հայկ	բացակա
2	Ամիրյան	Կարապետ	կողմ
3	Ավետիսյան	Լիանա	բացակա
4	Ասլանյան	Մեյրան	բացակա
5	Բաղդասարյան	Տիգրան	կողմ
6	Նանյան	Թաթուլ	կողմ
7	Հայրապետյան	Հրահատ	կողմ
8	Մայիլյան	Զոհրաբ	կողմ
9	Նազարեթյան	Վարդգես	կողմ

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ